ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2020թ. թիվ 434-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԱՎԱՐՏԻ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2020 թվականի հունվարի 29-ին հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրերի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի ներկայացման ժամկետների ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Անտառամուտ համայնքի ղեկավարի 01.06.2020թ. թիվ 178, ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի ղեկավարի 02.06.2019թ. թիվ 146 գրությունները՝ ծրագրերի ավարտի մասին և ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի փետրվարի 5-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 05.06.2020թ. թիվ 4 որոշումը /կցվում է/՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ավարտված համարել Անտառամուտի համայնքապետարանի կողմից իրականացված «Անտառամուտ համայնքի ակումբի շենքի վերանորոգման աշխատանքներ» ծրագիրը:

2. Ավարտված համարել Եղեգնուտի համայնքապետարանի կողմից իրականացված «Եղեգնուտ համայնքի գյուղամիջյան հուշաղբյուրի վերանորոգման, խաղահրապարակի վերակառուցման, տաղավարի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը:

3. Դադարեցնել Հարթագյուղի համայնքապետարանի կողմից 04.05.2020թ.- 30.06.2020թ. իրականացվելիք «Հարթագյուղ համայնքի Սուրբ Հովհաննես տանող ճանապարհի խճալցում և բարեկարգում» ծրագիրը՝ բացասական եզրակացության և աշխատանքների կատարողական չներկայացնելու հիմքով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 5
ք.Վանաձոր